

ՍԵՒՆՆԻՆ՝

Այս նահանգին մէջ կայ Սալուկիս եւ ուրիշ տարւած բոց՝

Սեւեկից ներքին եւ միջին մասերը գերատիրոն կը կոչուին եւ են՝ 1. Գեղմանիկապոլիս, 2. Տեւրուզպոլիս, 3. Դամասկոսպոլիս, 4. Զննուպոլիս, 5. Նէսապոլիս, 6. Ալաւզուպոլիս, 7. Իրեւնուպոլիս, 8. Արտաշատ, 9. Ղաւազապոլիս, 10. Դարիսանդոս:

ԿԱՊԿԱՅԻՆ՝

Իբն խորագրէ՝ նահանգներուն ստորագրութեանը մէջ ընդհանրապէս միայն մայրաքաղաքները յանուանէ կը յիշատակէր, իսկ ամրոցներուն միայն թիւը նշանակելով զհասնար. ընդհանրապէս կապագովիկոյ սահմանադաւառին ստորագրութեանը մէջ՝ քաղաքաց անուններու բազմութիւն մը ետեւէ ետեւ կը շարէ.

1. Կորոս քորούριον τὸ καλούμενον Κύρον վն. Թեմ. 21, 5:
2. Հասին (حسن) = Հիւսն առ-Սաբալիբա (Սլաւաց գրեւոր).
3. Անթիոքուս.
4. Ալ-Ալբաբ.
5. Դոււլ Գրիւ՝ կամ՝ Ջոսապիւրուս = Հեբալիւս-Արեւիստա, ա. էջ 84: Ասոնցմէ զսոս գրեւ 14 ամրոց կը յիշատակէ, որոնց մէջէն Սաբալիբ երկրին մէջ կը գտնուին:
6. Մաշիկա.
7. Բալանտա (Բալիսա).
8. Մալապոտա.
9. Աւանիս.
10. Մալապոտիս = Մալապոտիս (Թեւոփ).
11. Բազապոլ (Թաւալա) = Անթապոլիս.
12. Բարբալա.
13. Սլաւանուս:

Անուանց ձեւերուն ընդգործակութեանը մէջ ստեղծ տեսլանքը պարզած են. բայց որովհետեւ Արաբացիք իրենց ծանօթ վայրերուն սովորաբար տարբեր անուններ կու տային, այս պատճառաւ ալ շատ դժուարին է զանոնք բուն տեղացի անունանց հետ միարանելը: Կոստանդին (վն. Թեմ. 21, 3) Կորոս ամրոցէն զսոս կը յիշատակէ նաեւ հետեւեւիլ քաղաքները. Տիւսան, Փաւստինուպոլիս, Արեւիստա, Կապադոքիս, Երիւսիմա (կարգա՝ Սասիմա), Գառնապոս, Հեռեգեգովիս, Մովկիսոս եւ Կորոս անուանեալ բերդը: Դարձեալ (վն. Ալաւ. 225, 23) երկու շրջանով (Banda) կը յիշատակէ, որոնք երբեքն կապագովիկոյ թեմին կը վերաբերին, զորոնք իտայ լեւնին իւր հայրը, Գարսիանոնի հետ միացուց. ἀπὸ δὲ τοῦ Καππαδοκῶν εἰς τὸ τοῦ Χαρσιανῶν θέμα ταῦτα τὰ βάνδα μετεσθῆσαν, ἥτοι ἡ τοῦμα Κασῆς ἐξ ὀλοκλήρου καὶ ἡ τοποτηρησία Νύσσης μετὰ τῆς Καισορείας.

* Զմմ. Նեւե. Ramsay, the historical geography of Asia Minor p. 340 ff. ուր արաբացի աղբիւրներէ յիշատակած կարգ մ'անուանց կը շնչայ համաստեղ, սակայն առանց որչա հետեւութեան. Դոււլ Գրիւ՝ մասին տուած ձեւնս թիւերը բարդովն սխալ է:

Իբն խորագրէէ գրուած պետութեան ստորագրութեան մէջ ծովային երկու քաղաքներ մտնու. Եգեւականի եւ Արեւիկեանոսն. մասին ամենեւին յիշատակութիւն չըլլալը զարմանալի երեւոյթ է: Յամենայն դէպս ասիկա մոռցած բան մը չի կրնար ըլլալ: Ը. Կարու եւ Թ. ին սկիզբներն եղած կայսերը՝ գրեթէ ամէնքն ալ տարիական բանակին աւագանւոյն կը վերաբերէին: Հարթութեանց հիմնադիրը ու յափշտակիչը, ինչպէ՞ս Լեւոն Խուսրապին, Արտաւազգ, Լեւոն Սէյ, Միքայէլ Թոթով եւ Թովմաս, տարիական բանակին բարձրագոյն անձնաւորութիւններն էին, որոնք իրենց քաղաքի պարուծի գնդերովը՝ Փոքր Արիւ խարապան Արաբացիները եւս վանած էին: Հետեւեալագոր Բեռնուսներու, հետեւաւար ալ եւս անցոր էին Արարացոց անդուլ յարձակմանց առջեւ անձնու, Բիւզանդեան նորակազմ հեծելազոր գնդերը (Καβαλλορικὴ θύμας) եւ իրենց քաղ պաշտօնակալները, որոնք մեծաւ մասամբ փոքր տարիցի, հայ ու վրացի էին, Արաբեանց դրոշին դէմ պատերազմիչ յանձն կ'առնուէն, զոր եւ յաւըրութեամբ ի գլուխ կը հանէն: Իսկ նաւային զորութիւնը բարձրագոյն թողիչը եղած էր, որուն հետեւութեամբ ոչ միայն Արեւել կըլլէին Միքայէլ Թոթովի ատեն սպանիկացի կորաւորաց ձեռքն անցաւ, այլ եւ ոչ Սեկիւիան՝ ընդգէմ Բարսեղ Մանիկոնաւոյն տղն կարեւոր նահանգին պաշտօնակալութեանը համար գործարարած զինացին միջոցներուն, կըցաւ իւր գոյութիւնը պահել: Անշուշտ ծովային թեմերու այս վիճակն աչքի առջեւ ունենալով՝ զանոնք յիշատակութեան արժանի համարած պիտի չըլլայ:

(Հարուսեփէ)

ՊՐՈՓ. Զ. ԳՈՒՆՇԻՐ



Կ Ե Ն Ս Ս Գ Ր Ա Կ Ա Ն

ՄԱՐՏԻԱՆԻ ԳՅՈՒԿ ԷՃ ՄԸ ՈՂՐՈՇՅԵՆԸ ՕՏԵՓԵՆ ՓԵՇԵ ՈՍԼԵՆԵՆԵՐԻ ԿԵՆՍԵՐՈՒԹՅՆԵՆ

1887 Յունվարի 13ին, այսինքն՝ ողբաբեալ Փաշային 1883ի Եգիպտոսէ վերջին օրերուութեան վերադարձէն ետքը՝ առաջին անգամն էր որ մտքէ շանդած անակնկալ մը զիս անոր հետ շատ մտեն ծանօթանալու կամ լաւ եւս՝ ընտանեակու բարեգէպ հարկի մը մէջ կ'ընէր:

Սկզբունքով եւ գաղափարներով միշտ անբաժանելի անուանակից մը, գրեթէ նոյնապի սիրեցեալ եւ ողբաբեալ Ստեփան Սեփի փափագեան, նոյն թուականին Ս. Դանդեան տունին երկրորդ օրն էր, որ եկաւ զիս գտնելու իմ նորակազմ համասնակարներն մէջ ի Գումպեղան, եւ քանի մը վայրկեանի համար առանձին տեսակցութիւն մը ինչպէս: Արտասովոր բան մը չէր փափագեանի այցելութիւնն ի մէջ, ողբաբեալ, յաճախ այցելած էր

աներոյն տունը, ուր ծանօթացած էի իրեն. եւ այս առանձին տեսանկյունիւն լրագրական հրատարակութեան մը կը վերագրէի:

Այս պերճախօս ժողովականն, իբր մեծ ժողովրդական, տակաւին թուով շատ են մեր մէջ զինքը յիշուներն, եւ ամէնքն ալ կը խոտոտվանին թէ յիշեալս որչափ յամառ. եւ անքննելի բնդդիմախօս, նայչափ ալ զօրաւոր միտք եւ բոլորանունը հոգի մ'էր իր բարեկամներուն համար, համակ զգանութիւնով ողորդած:

Երբ առանձին մնացի իրեն հետ — բարեկամս, աճապարեք ընել ինձ իր սովորական պերճախօսութեամբը, անգամ մը տարակույթ քողով ծածկուած պոքիկ եւ սուր աչքերը անխուշ հետաքրքրութեամբ վրաս սեւեռեւէ ետքը գիտեմ արդեօք որ մեր ամենուն սիրած եւ յարգած փաշան, իր անձին նկատմամբ՝ փառասերը որոշումներուն մէջ կը տատանի, եւ թէ եւ իրեն զարման՝ շատ անքիւր ըրի համոզելու զինքը որ ժամանակ մը Պարիս, իր գլուսներուն քով իրեցալ եւ Մ... ր եւ քովս պահեմ, սակայն կը գովամակի եւ զանազան պատճառներն յառաւ բերելով՝ կ'ընդգիծանայ նաեւ իր վերջին տարիներուն այս լքեալ եւ կարօտեալ կանաչկէն մէջ՝ գլուսկացը հոգ եւ ծանրութիւն պատճառելու. ուստի եկայ որ օգնես ինձ այս առաջարկս ընդունիլ տալու անոր:

— Բայց թէ՛ կերպով, սիրելիս, փութացի պատասխանել ինձ համար այս քիչ մը գօտարաշած եւ շահակամայի բառերուն հանդէպ կարելի եղածին քան անտարբեր ձեւառալով. եւ որ ուրիշներու պէս միմայիս կը մտայ հիպոթեզներէն ըլլալով՝ անձնապէս ո՞նէ ծանօթութիւն մ'ալ չունիմ նորին վեճմունքեան հետ, որպէս զի համարձակիմ պահմանուած այդ տեսակ ծառայութեան մը մասնակցիլ ձեզի: Ապահով եմ թէ անիկա միշտ լուրջ, խելանի եւ ուղղամտ անձնաւորութիւն մը եղած եւ այս երկրին մէջ, հետեւաբար հուսադարձիմ նաեւ մեր վեհապետին եւ իւր ամէն պաշտօններուն, զորս արժանապէս կը վարէ 40 երկար տարիներէ ի վեր թէ բանակին եւ թէ Երեւնի համար, եւ օրոնց համար ալ արժանապէս գնահատուած ու վարձատրուած եւ եւ թէ՛ այսօր մէջ քանի անիտը մերանդեայք յաղարդել կը կարծեն իրենց լարած մերկայութեանց մէջ եւ զայն ժամանակ մը նեղուելու եւ տուապելու կը զատապարտեն, պէտք եւ փառահերթն զինքը պապհով ըլլալու մեր հայրախնամ վեհապետին աշխարհահռչակ արգաքարութեանը, որ պիտի փութայ անշուշտ երեւան հանելու անոր անմեղութիւնը եւ մեծագոյն շնորհներով լիապէս պիտի վարձատրէ իր ամբողջ հաստատուած պաշտօնեաները:

Այո, ըսաւ փափաքեան քիչ մը շուռչ առնելու գօտարանալով այս պարզ դիտողութեան համար. Ժիշդ այդ շնորհաբուխութիւն հանդիւրդարութեան ինչ կը կատեցնէ զիս գործել եւ քու աշակցութեանդ ղիմելու կը պարտաւորէ: Փաշան չի հուսադար երբեք որ արքունիքի իրեն արտասահման երթալու եւ պատահած անիրաւի այնքան խոր վիշտ պատճառած եւ, որ կը կարծէ թէ

աշխարհ համայն թշնամի եւ իրեն եւ ամեն կողմէ հալածանք կը տեսայ, եւ որովհետեւ մեքը, բարեկամներն, գիտեմք թէ սա է, արգելել պատճառ մը չկայ զինքը այդ ուղեւորութենէն արգելալ, կը խորհիմ որ այդ մարդը ապահովելու եւ պահ մը անոր միտքը անդորրելու համար հանդիմնէր առ այժմ որչի՞նչ անհաս առնուած անցադրով մը կատարելու մեր այդ առաջարկութիւնը. սակայն պէտք է որ այդ ուրիշը փառահռիւ եւ պարկեշտ անձ մ'ըլլայ, եւ այդ անձը դուք միայն կարող էք ըլլալ որ անշուշտ սիրայօժար պիտի առաջնորդէք զայն շոգեմաւ, իրեն ողբերթի եկող ձեր մէջ հօրեղբայրը, ուր եթէ ձեզ հետապնդող մը չըլլայ, դուն դուրս կ'ելլես շոգեմաւէն եւ տունդ կը վերադառնաս, իսկ հակառակ պարագային արդէն ամէն գործողութիւնք ձեր անուան կատարուած ըլլալուն, փաշան ետ զրկելով՝ անտարբերօրէն կը շարունակէք ուղեւորութիւնիդ. մինչեւ Պրիւս կամ Իսթիլ, ուրիշ քանի մ'օրէ կը վերադառնաք վերադառնալէ քան ընտանեաց քով: Ահա այս եւ միայն ձեզմէ ինդիքած ծառայութիւն զոր պիտի շնորհէք անշուշտ յանուն իւր մեծ մարգուտ:

Այս պարզ յայտարարութիւնն ժահուն ցուրտ սարսույթ պատճառէր ինձ նախապէս, վաճառ զի դեւ 15 օրուան ամուսնացած եւ մերջալուծի օրերուն մէջ կը գտնուէի, երբ այս կուռտիկ հրապարակախօսն փառահռչար կու զար այս մահաւան հրաւերը տալու ինձ. արդարեւ հոգեբանական մեծ հմուտ թեան պէտք չկար Փաշային գտնուած նեղ վիճակը հասկնալու համար, սակայն նոյնչափ վարչական խորին գիտակցութեան մ'ալ չէի կարտօնայրդ ձեռնարկութեան տիտէր հետեւանքը երեւակայելու. հայալ եթէ երեւան ելլէին իրողութիւնները եւ թէ՛ ձեռքակալուէի, ի՞նչ ձիւնը եւ ձախորդութիւններ պիտի հրապարէի անոր եւ իմ գիշուս, շիրնալով արդարացընել զինքս օրէքին ամէն խառութեանց առեւել: Սակայն ողբացեալ փաշային վիճակով մը ծանր էր եւ անոր ժամանակ մը հեռացումը տարկադրաբար կարեւոր, շտեմբէր լքուած եւ արհամարած ըլլալուն պատճառաւ, որուն հոգութիւնը պահպանել, հաւատարմութիւնը ապարդուցանել եւ ստույթիւնն ու զգալարութիւնը մերկապարանդ ընել, երկրին եւ կայս. կառավարութեան համար անշուշտ մեծ առաքելութիւն մը պիտի համարուէր եւ հարկ էր որ քիչ մ'ալ զոհորութիւն եւ անձնաբաշտութիւն պահանջը մեղմէ. սակայն եւ անկարող կը զգայի զինքս այդ գործին եւ ձեռնթափ պիտի ըլլայի՝ երբ փափագեանի համոզել լիզուն եւ տուած մանրակրթութեան բացառութիւնները ակամար Տարկադրեցին զիս գործակցելու իրենի շնամբիտս ըսելով եւ քիչ մը թերահաստ էի գործին յաղարկութեանը, սակայն քանի որ փափագեան մ'էր այս ծրագիրը ներկայացնողը, շատ պատճառներ ունէի հաստատուել որ անոր այս առաջարկութեանը մէջ ո՞նէ շահակցութեան ձգտում մ'էր չկար Փաշային եւ անձին փառս բերելու. հետեւաբար խառնացայ իրեն, կարգադրութեան մը համեմատ մինչեւ երեքշաբթի պատրաստել տալ անցագիրս:

* * *

Մինչև չորքըշարթի չեմ յիշեր աղէկ թէ
 Բնշ ներքին արտադրութեամբ անցան օրերս.
 Հակառակ դուրսի եւ տնտեսի բնութեան
 մտածկոտ եւ տխուր կերպարանք մ'աւորէի, նոյն
 իսկ գեւատի կողակցին հարցումներուն հանդէպ,
 որ այս յանկարծական անօրինակ փոփոխութեան
 մասին պարմանք, յայտնեի չէր դարձեր: Որոշուած
 օրն անցագիրս գրպանս էր Պիրէա երթալու եւ
 մինչև Պարիս շոգենաւի եւ շոգեկառքի տոմսակ
 ալ բերած յանձնած էր ինձ Փափագեալ: Հետեւա-
 բար չորքըշարթի առաւօտ շատ կանուխ դուրս
 ելայ բնակարանէս, մինչդեռ ամենքն ալ գեռ
 մշիկ մշիկ կը քնանային, եւ միմիայն Մ. Մ.
 Է. Ֆ. ի քանի մը պատուէրներ տալ աւելորդ Հճա-
 մարեցի ուշացմանս առթիւ. տունս ապահովելու
 մասին, Հետեւաբար ըստ կարգադրութեան կա-
 մուրէ իջայ, առաջին շոգենաւով դատարգիւղ,
 Մօսկայի պողոտային վրայ Փաշային բնակարանը
 գտնուելու համար:

Անձանօթ մ'էի մինչև այն ատեն այդ տան
 համար, եւ չէի ալ գիտեր թէ Բնշ ընդունելու-
 թիւն պիտի գտնէի այս եղած կարգադրութեան
 համար. քանի որ կանխաւ այս մասին ոճէ կտր-
 ճըզագցուծիւն մ'ալ կատարած չէի անոր հետ:
 Եունվար 7ի ամենէն ցուրտ եւ խոնաւ օրերէն
 մէկն էր եւ թիւիւն մուսակաւ մը կը տրորէր ամ-
 բողջ մայրաքաղաքին մէջ՝ երբ շոգենաւ նստայ. Գա-
 արգիւղ հասնելով՝ նաւամայուցէն կառք մը վար-
 անցի երթ ու վերադարձի պայմանս եւ արուած
 հաղցէին համեմատ Փաշային տունը առաջնոր-
 ղուեցայ: Ստացած հրահանգներուն համեմատ
 բնաւ արդէք մը չպատահեցաւ ինձ անոր բնու-
 նուելու, նոյն իսկ սովորականէն շատ կանուխ եւ
 Փաշան իսկ տակաւին արթնցած չլլայով հանգերէ:
 Առաջին անգամ զիս դռնէն ընդունողն եղաւ
 միջահասակ սեւահեր եւ թխադեմ սիրուն եւ հա-
 մակրեկի օրիորդ մը, տնական համակ սեւ պարզ
 շրջագոտն մը հագած, որ այցելութեան շար-
 քառիթն եւ անուան տեղեկանալէ ետք, արցուն-
 թուտ աչքերով զիս դրան չքով գտնուած այցե-
 լուաց արհմ մը առաջնորդեց:

Հազիւ քանի մը վայրկեան տեսի եր սպա-
 սուսն, երբ Փաշան իր սովորական բոլոր շոգեղէն մէջ
 պլուսեւ եւ թաւիլէ ձեռագործ գեղեցիկ գտակ մը
 կրուեք, ծանր քայլերով արահը մտաւ զիս տեսնելու:
 Ընամորթար այդ մեծ ու հոյակապ անձնաւո-
 րութիւնն, իր տնական այս պարզ ու համեստ
 դիւրապահեալ մէջ՝ շատ պզտիկած կը տեսնէի.
 իր այդ գիթով առաւել բնաւոր եւ բարեհամբոյր
 հօր մը երեւոյթը ունէր, քան մեր ժողովիրուն եւ
 ժողովականներուն մէջ ծանչցուած ու գնահա-
 տուած յամաւ, ուղղափառ եւ անպաւաւ վարպետներն:

Մտնուած ընելու թէ ինչն մտած ատեն
 Փաշային վրայ տեսած անտարբեր եւ պտղաբեր
 ընթացքս, պահ մը կասկածել տուին ինձ թէ մի
 ուղեցի իր դարմանման անմիջական պէտք ունե-
 ցող հիւանդ մը կարծէի զիս. եւ մինչդեռ կը
 պատրաստուէի ինք զինքն ներկայացնել գիտեցի
 որ Փաշան անգամ մը զգուշութեամբ դէպ ի պա-
 տահանը նայելէ եւ փողոցը աչքէ անցնելէ ետք՝

անմիջապէս քուս մտեցաւ, ճիշդ այն պահուն
 մանուանդ՝ երբ ես ոտք ելած էի խոտարհութիւն
 մ'ընելով իր քղանցքը համբուրելու:

Կասկածս փալաւած էր ընդորոշուի, եւ Փա-
 շան սիրարկու կերպով ձեռքերս բռնելով՝ զիս
 ճիշդ իւր քուլը նստեցուց բազմոցին վրայ եւ
 եղանակուն վրայ մանրամասնօրէն տեղեկութիւն
 ներ հարցուց, որոնց ամենուն պատասխանեցի
 առանցք թան մը ծածկելու:

Երբ այս ամենուն վերահասու եղաւ, կար-
 ծես լքած իծաղ մ'անցաւ Փաշային շքններէն:

— Այո, գիտեմ, ըսաւ տխուր եւ արտաքեկ
 ծայրնով խորին նայաւած էր արձակելով վրտս,
 գիտեմ զեզգ առեւտ առաջնորդող զհարբերու-
 թիւներ, գիտեմ նաեւ թէ մեծ եւ կորովի ան-
 ձնուիրութեամբ այս խորհրդաւոր ծառայութիւնը
 կատարել յանձն առած էք ինձ համար, սակայն
 որքան ալ շնորհապարտ ըլլալ ուզեմ ձեզի եւ
 բարեկամներուն, ախմայ կը վարանիմ հաւատա-
 լու որ այդ ձեռք առնուած միջոցները յաջողին ի՞մ
 ցաւերս իրապէս մեղմացնելու, եւ առաւել վախ կը
 պատճառեն նաեւ որ մի վուցէ վերահաս անյուս-
 ղութիւններ կրկնակի աստակացնեն իմ բարոյա-
 պէս մահացուն ալ փութացնելով: Աւաղ եւ բիւր
 աւաղ. շատ անգուլի եղաւ այս անգամ աղբ.
 շրջանակի մէջ ինձ տարակծութիւն եղողներու օտ-
 խութիւնն, որ անձնական անարգ հայիւններու
 հետ շփոթելով ի՞մ առ հայրախնամ վեհապետին
 պարտաւորուած անարատ հաւատարմութիւնս,
 յաջողեցած իրենց աղտոտ եւ մրտ ձեռքերով
 գահալիճք բնէլ զիս եւ այս ողբալ վիճակին հաւ-
 ցնել. բայց ես յետ Աստուծոյ, որու հաւատացած
 եմ միշտ, յուսալից եմ մեր իմաստուն վեհապե-
 տին աստուածապարգէս արգարտօրութեանը, որ
 մանաւոր ժամանակի մը մէջ անմիջութիւնս երեւաւ
 հանելով՝ ամբողջապարտ պիտի թողու թշնամի-
 ներս... *

Աչքերս արցունքով լեցուեցան եւ սաստիկ
 յուզուեցայ սղագեղ Փաշային այս յայտարա-
 րութեանը առջեւ: Բայց գգուշացայ յուզումս
 յայտնելէ եւ սիրա ատենը ձեռացնելով յորժո-
 րեցի զինքը որ ապահով ըլլայ ձեռք անուան
 միջոցներուն յաջողութեանը. որոնք զենքըլայդ յու-
 սացած վերջին վայրկեանը վայրելէ տալու օտհ
 մանուած էին: Ըսի թէ վարնալու բնաւ պատճառ
 մը չկար եւ ոչ ալ արգելէլ պարտաւոր մը իր այս
 հետաքրքիր կատեցող, ինչպէս որ վտառահալացու-
 էին զիս իր մասին քաղած տեղեկութիւններս:
 Հետեւաբար երբ իմ անուան մինչև Պիրէա
 երթալու անցադիւս եւ Փափագեալն ինձ յան-
 ձնուած Պարիս ուղեւորելու շոգենաւի եւ շոգե-
 կառքի տոմսակի վարարուն եւ պատրաստուած
 ըլլալ յայտարարեցի, Փաշան ինքզինքը այլ եւս
 կատարուած եւ վերջացած իրողութեան մը առջեւ
 տեսնելով՝ նախապէս անոնց երկուքին մէջ խո-
 սուած կարգադրութեան մը համեմայն, պար-
 տաւորեցաւ մի առ մի յանձնել ինձ իր ուղեւորու-
 թեան անտուրի եւ պայուսակի բանալիներն, որոնք

արդէն մէկ քանի օրէ ի վեր պատրաստուած էին, ինչպէս նաեւ զգէ կախուկէք ուրիշ փոքր պայուսակ մ'այ, որու մէջ գետեղուած էր 130 սակիի մօտ իւր մնացորդ ամբողջ հարստութիւնը եւ որուն կէսէն աւելին փոխ տուած էր իրեն ողջացեալն Փափազեան, որ իր վրայ առած էր անոր մեկնելէ եւ օրիորդ ֆերուկանն իր տունը փոխադրելէ ետք, տան արեւքաւոր կարասին եւ գլխքըր ծախելով՝ Թէ դիզուած պարտքերը վճարել եւ թէ ըրած փոխառութիւնը գանձել:

Եսայանի կ'երեւար որ փաշան այս գործին յաջողութեան մասին համարում գոյացընելէ շատ հեռու էր տակաւին եւ ահամայ կը համակերպէր մեր հրահանգներուն. սակայն իւր յանձնումը այն-ման վտանգօրէն եւ պաշարիւնով ետաք կատարեց, որ անոնց անկորուստ պահպանման մասին խօսք մ'իսկ կրկնել աւելորդ համարեց. միայն նոյն որ շողենաւ մտնելու եւ նաւամատոյցին վրայ որդեակ ժամուն իրար գանձելու պարագաներուն վրայ պահ մը խորհրդակցելով՝ հարկ եղաւ կարգադրութիւն մ'ընել որ իմ մեկնելէս ետքը ինքն ալ այն օրը կ'զդէր երթալ հիւանդ-այդի մը գացածի պէս եւ երեկոյին ժամը 10ին կամուրջին վրայ դառնուի, ուր պիտի սպասէ իրեն միասին շուգենաւ երթալու համար:

Արդէն տանը ծառան ճնտուկ, պայուսակ եւ անոր մուշտակաւոր բաճկոնն եւ այլն խնամքով անշարունակ եր կուգան մէջ, որ գուրաք կը պատեն զին վերտաին նաւամատոյց փոխադրելու համար: Սակայն երբ մեկնելու համար սենեկէն դուրս կ'ելլէին, դրան առջեւ ոտքի վրայ կանգնած գտայ իր հոգեհարազատ ֆերուկանուհին արտասուայի աչքերով, որ իր դահիճին նայողի մը պէս ինձ կը նայէր խորհրդաւոր լուծութեամբ մը, որով շատ բան ըսել կ'ուզէր ինձ:

Հարկ եղաւ քանի մը խօսք ուղղել անոր եւ ապահովել զայն թէ իր այնքան դուրգորացած հայրիկին համար ընաւ վախկնալու պատճառ մը չունէր, եւ թէ իրենց բարեկամներն արդէն կարեւոր միջոցներն կանխատեսած էին անոր աչքին եւ պատանդն արատ մը չերթելու եւ անոր հանգիստը չխանգարելու համար:

Խառնադատալի եւ անբարալի ձեռքի սեղ մուսուլ մը մինչեւ գուռը շարիւրացաւ ինձ. կը հասկնայի թէ ինչ ըսել կ'ուզէր հէք աղլիկը, որուն ի մանկութենէ միակ յոյն եւ ապաւենն եղած էր ողբացեալ փաշան:

Եւ որպէս զի դարցիք եւ անցորդներ կարծեն թէ մէկ քանի օրէ ի վեր փաշային բնակարանին մէջ հիւարարուածն օտարական մ'էի եւ այդ օր կը բաժնուէի ուղեւորութիւնն շարունակելու, արդէն նպատակին մէջ ալ բաւական յաջողած ըլլալուս, անտարբերօրէն կուգըս նետուեցայ, ծիծաղկոտ եւ խնդումներն խոսակցութեամբ մը եւ ընտանեկան բարձրագոյն մնաց բարեկներով, որոնց շատ կարճ եւ կորուկ պատասխաններ արուեստն, բնականաբար այդ միջոցին անոնցմէ իւրաքանչիւրը զանազան մտազբաղութեամբ յուշուած ըլլալուն, որ զմեզ հետապնդողը մը կրնար կասկածելու սեղի տալ:

*

*

*

Արգարեւ անոնցմէ բաժնուելէս ետք, հաւառակ զգացած երկիւղալի տպաւորութիւններուս, առանց զօժարութեան եւ արգելիք շողենաւ մայայ եւ մինչեւ կամարը հասայ. սակայն կը խոստովանիմ որ ես ալ անկարծ եւ բուրբոյն անփոքր էի այս տեսակ յանգուգն ձեռնարկ մը միս միայնակ յաջողցնելու. մանաւանդ որ բուն իրողութիւնն ալ անձամբ էր ինձ. հետեւաբար բնական է թէ այդ պահուն վարանտ եւ վախկոտ կերպարանք մ'առած ըլլայի:

Ինձ յանձնուած սնտուկին ծածկողթին վրայ S. A ասղակիտուած փաշային անուան երկու սկզբնատուները կային, որ կրնար յարմարիչ հօրս անուան սկզբնատուներուն. անցադիր եւ շուգենաւային տոմսակ իմ անուան առնուած ըլլալով՝ այդ մասին ալ յետէ երկիւղ մը կրեմ ապառ էի, ստոնցմէ զատ քովս բաւական կորիկի գումար մ'ալ կը դառնուէր, որ հակառակ պարագային տակն դիւրութիւն կ'ընծայէր ինձ ծանորութեան շարունակելու եւ կամ ուզած ժամանակս վերադառնալու համար, բուն է թէ ասոնք չէին անշուշտ զին վարանտում մասնող պատճառներն. նախ կը մտածէի թէ ինչ պիտի ըլլար ինչո՞ք փաշային վիճակը եթէ անանկալ անյարգութիւն մը յանկարծ երեւան հանէր մեր գաղտնիքը եւ փաշան գուրս հանուէր շողենաւէն. իսկ հակառակ պարագային ինչ պիտի ըլլար նաեւ իմ վիճակս, եթէ ծանր պատճառ մը կար, անոր մեկնելէ ետք, շուգենաւէն դուրս ելած տատեն իմ գործակցութիւնն երեւան ելնէր. ահա ասոնք էին որ սարսափ եւ խորունկ մտատանջութիւն կը պատճառէին ինձ:

Մտաւրկները եւ գլխքին ըստ տեղային օտարութեան մաքսատուն փոխարել թուի. հետարբեր էի անոնց մէջ պարտականութիւնն ալ իմանալու: Մնտակներուն մէջ ճերմակեղէններէ, քանի որ ձեռք հագուուած, 4—5 կտոր բոշկական գրքերէ, եւ անշուշտ մոտացմամբ կամ անգղուշութեամբ զետեղուած վերաբուժական գործիքներէ զատ ուրիշ բան մը չէր գտնուէր, զորս միտումի դիտմամբ դուրս հանեցի սնտուկէն եւ ձեռքովս տեղաւորեցի. այս գործողութիւնն ալ աւարտելէս ետքը՝ կը մնար կանխելէ փոխարել զանոնք շուգենաւ, պայմանագրեալ ժամին բողբոլիկն ապառ ըլլալով՝ թէ դիւքս եւ թէ փաշան հոգալու համար:

Սէս տանն, կը յիշեն անշուշտ ընթերցողը, որ քարափի շինութեան զեռ չէր ձեռնարկուած. ուստի մաքսի նաւամատոյցին անմիջապէս նաւակ մը վարձելով՝ ուղղակի Գրանախան Մէսաթըրի շողենաւը գացի, ուր վեր ելլելով առաջին գործս եղաւ Բաճարօնը գտնել եւ տոմսակս ցուցնելով՝ գլխքս տեղաւորելու համար՝ յատկացեալ խցիկս տեղեկանալ:

Գործս ելայ շողենաւէն քանի մ'անձնական պէտքեր հոգալու եւ անցադիրն ձկնէ կատարելու պատրուակով. այս առթիւ չէի մոռցած տեղեկանալու նաեւ թէ շողենաւը որոշապէս որ ժամին պիտի մեկնէր:

*

*

*

Յաջորդաբար իրարու ետեւէ տեղի ունեցած այս գործողութիւններու շարքն, այնքան շուտ եւ արագ կատարուած էին որ առաւօտեան ըստ թր. զեռ. ժամը 5 էր, երբ ամէն բան աւարտած այս նաւակէն դուրս ելայ, սակայն այնքան յոգնած ու պարտած էի որ այն միջոցին կուշտ ու կուռ ճաշ մ'ընելու եւ քիչ մ'ալ առանձնանալով խորհրդածելու պէտքը անհրաժեշտ երեցայաւ. մանաւանդ փոտոհնէին նաւավար մ'ալ գտնելու մասին, որու վրայ չէի խորհած բնաւ. եւ որուն պարկեշտութեանը վատահելով՝ պարտաւոր էի գաղտնիքիս մէջ մասը հայտնողի։

Ճշայն առեւն միտքս եկաւ Մէհմէտ անուն թիւրք նաւավար մը, որ այս յատկութիւններով նշանաւոր հանդիսացիր երբ Ղալաթիոյ ծովագերաց վրայ, եւ գիտե՛ք որ շատին անոր կը վստահէին իրենց գէյըր եւ գաւակները շոգնեալ փոխադրելու, եւ ես ալ ծանօթացած էի անոր հետ քննեկալին միջոցաւ որ Պրեսիս եր բնակէր եւ իր անաւան ամէն փոխադրութիւններն անոր ձեռքով կատարել կու տար։

Բայց այս գործը բոլորովին կը տարբերէր անոնցմէ. հապա էթէ մերժեր կատարել, եւ կամ թէ այնքան բարձր գին մը պահանջէր, որ չկարողանայի վճարել. ինչ կ'ըլլար հետեւեալքը իմ մտքով շնորհեալու. իրաւ է թէ այն առեւն այնքան խիստ եւ մանրամասն հսկողութիւնը կը պակսէին ծովորու վրայէ եւ մարդ շոգնեալ մտնելու համար կը բաւէր իրեն, անոր մօտ պաշտօնական նաւակի մը մէջ ապաստոյ ոտակորդին մը իւր անցագիրը ցուցնել եւ ուղեւորի մը հետը ընկնալ ցողեմուն վերաբոյժին գուրս ելլելու մասին նաւավարը պատասխանատու ընէր. սակայն նաւավարը ապուշ կամ հրէշտակ մը չէր անշուշտ. գաղտնիքին առգամ մը տեղը ըլլած էր որ, երբեք էր իրեն ուզանին չափ դրամ ստանալու. հետեւաբար այնպիսի ընթացքի մը հետեւիլ կը պարտաւորէի, որ ոչ այն կապկա՛ք տայի իրեն եւ ոչ ալ ընծիքը բոլորովին ծածկէի։

Բարեբախտաբար օգին ցրտութիւնը կը խտանար եւ նպաստաւոր կը գաւառը մեզի, անակի որ բոլոր պաշտօնեաները հետզհետէ սկսած էին հեռանալ ծովագերէն եւ յարկերը կը քաշուէին պատասպարուելու համար։

Երբ ճաշարանին ելայ 4 ժամ եւս ունէի կամուրջին վրայ փաշային սպանելու. սակայն այն շորտ ժամանակ անցընելու համար շորտ գարեթի կ'երեւակայ ինծի. պարտաւորեցայ մտապիտակ սղարան մը մտնել պահ մը առանձին խորհրդածելու համար ընելիքին վրայ. բայց բան մ'ըսեմ ձեռք չկրցայ երկու վայրկեանէն աւելի կննալ հոն. բան մը կար, մաքր բուռն ուղեւորական մը որ շաբաթական եւ անգուշ կ'ցնցեր զիս՝ դուրս եւ օտքի վրայ գտնուելու. փորձ մտորկի կ'ըսեմ թէ յանդուգն գործեր յանդուգնութեամբ միայն կը վերջանան եւ խորհրդածելու վայրկեանին աւելի կը մնանին անոր յաղորդութեան. շատ իրաւ է. ձիշխմն ալ ստոր պէս բան մը եղած էր. կոնակիս հարուած մ'ընդունողի պէս ոտը ելայ անմիջապէս եւ գայի Մէհմէտը գտնելու Պրեսիսի սրբարանն, ուր կը գտնուէր միշտ գործ շունեցած ատենը։

Գտայ զինքը եւ երբ երկուքս առանձնացանք խորհրդաբար յայտնեցի իրեն թէ իր գործերէն վնասուած եւ շորտ կողմ պարտաբեկ ներգումած եղալոր մը ունէի, որուն քիչ մը ժամանակ մնայ լաքըսդքէն հեռացումը օգտակար կը նկատէի, իւր պարտապահանջներուն խտտութիւնը մեղմացնելու կամ անոնց հետ հաշտարար կորդադրութեան մը յանգելու համար. եւ այս պատճառաւ պարտաւոր տած էի իմ անուանն անցագիր մը՝ զայն շոգնեալ ձգելով՝ եւ վերադին գուրս երեւելու համար։

Մէհմէտ կարծեմ հաստատ խօսքիս կամ անակի ձեւացուց եւ փոստահարաց զին անոր յաւորմանը մասին գիւրութիւններ ձեռք ձգելու. հետեւաբար ըսած պատարաստութեանցս եւ անցագիրս մասին մանրամասն տեղեկութիւններ ստանալէն եւ իրեն համար 8 մէծիս սակարկելէ ետք, ժամագիր եղաւ ինք Ղալաթիոյ Լյայր կենդր. նամակատան նաւամատուցին առջեւ ժամը 11ին կալմ ու պարտաւոր սպանելու։

Բաժնուեցանք իրարմէ, բոլորովին ապահովուած իմ մասիս սյր զփուսարութիւնն ալ վերցուած ըլլալու։ Ար մնար միայն փաշային հետքը չկորսնցընել եւ անխորափ կամուրջին վրայ անոր շոգնեալն ելլելուն սպանել։

Ինչ, որքան իրկար եւ անվերջանալի էին ժամերը. միեւնոյն օրւան մէջ հազար ու մէկ անգամ գրպանէս հանուած ժամացոյցիս օւղըք վերջապէս իննիբորոր ատոյիճանին վրայ կը սլանար, եւ ես զեռ. անհամար երկուսեքի, վախերու եւ կասկածներու շուրջ ծփացող մտածումներու չէի կրնար վայրկեան մ'իսկ հանդարտութիւն տալ. շոգնեալներու մէկ կ'երթար օտարով, միւր կու գար գողակով, սակայն ես իմ ժամագրեալ ժամին առաջ, ամէն անգամայն ալ մտացուծեանք փաշան կը փնտռէի կարծեա հապառար ուղեւորներու մէջէ եւ ամենապատիկ քալուածքի եւ հասակի հետք կամ նմանադրութիւն, զիս ոտը կը հանէր գտնուած տեղը։

Մինչ այս մինչ այն վերապէս որոշեալ ժաման օպտուած շոգնեալն հասաւ. բայց չեմ գիտեր ինչու այդ միջոցին անակի պաղ օարբուս մը տիրեց երակներու մէջ եւ տառաց գիտնալու աչքերս շորտ կողմ շընցի անգամ մը ի զուր, զիս այս գործին առանջնորդող անոր ուրիշ բարեկամներն մէկն ալ տեսնելու մտաւ, որպէս զի զէ՛ք շորտ հայուածք մը փոխադրելով՝ վայրկեան մը գոհունակութեան շունչ առնուամ։

Հաւատացէր, ատոյիճաւարս նուազելու վրայ եր այդ վերջին վայրկեանին գործելու խանդս եւ լքանելու ակարութեանը տակաւ կը ծածրարու վրաս. սակայն միւս կողմէ, մտածելով ամենամեծ վատութիւնը կը համարէի գփուսարութեանց մեծագոյնը զգնելէ ամբողջապէս վերջացնելու ետք՝ վայրկեանական զատալքութեամբ մը ամենամեծ վնասգին ենթակիւլէ Տէրութեան եւ երկրին հաւատարմիմ, սիրուած եւ պարկեշտ այս անանաւարութիւնն։

Գիտէի աղէկ որ փաշային այս մեկնումը արգելք մը տակ չէր. եւ ոչ դը կը հետապնդէր զինքը. իր զգացած երկիւղին եւ կասկածներուն

մէջ ծանրապէս խորատուգուած բարեկամներ էին որ օտարաբնակ զինքը հեռու պահելու եւ գոռու շարքերնու կը ջնայային յուսահատ որոշումներ տալէ. եւ այս մասին ողբացեալ փափագեանք կատարած անձնութիւններն անմոռանալի մնաց փաշային քով մինչեւ ցմբերին շունչ: Այն վայրկեանին մտքին մէջ բնորոշ աստուծոյն գեղա որոշումը չտուած գիտեմք որ փաշան դուռն կ'էլէր շոգե- նաւէն իր սովորական պաղարհնութեամբ եւ յամբ քաղաքը:

Ինամով ծածկած էր վիշտ պարսիկ շարով մը, զոր սովորաբար ձմեռները կը կրէր իր վրայ եւ միայն հոգեւոր մ'աշէր իր աջ ձեռքը, զոր նոյն- պէս գաւազանի տեղ կը դրածներ: Չեմ գիտեր թէ ինչու կամ ինչ մտածումով, երբ գոռու ելաւ շոգեհաւէն, ինք չէր կրնար տեսնել զիս զտուած գիւրքին պատճառաւ, սակայն բնաւ փոյթ ալ չըսաւ զիս փնտռելու գէթ չըլնու հայտաւճռով մը եւ սկսաւ անփութօրէն բազմութեան մէջ անոնց հետ գէպ ինաւանատայցին ելնարանը յառաջանալ:

Հարկ եղաւ այս անգամ մտնելու անոր, եւ ալ բազմութեան մէջ խառնուելով. եւ երբ կա- մուրէին վրայ ոտը կրկնցիցը բարակ գաւազանին ծայրով թիթեակի հարուած մը տուի սրունք- ներուն եւ իրմ առաջ անցնելով՝ հասկցուցի իրեն որ հետեւի ինձ:

Մինչեւ կամուրջէն դուրս քանի մը անգամներ ետին գաւազանով տեսայ որ փաշան կը հետեւեր ինձ եւ մէկ քանի ծանօթներ կը բարեկր առանց բռն մը յայտնի ընելու. բայց երբ դարբանէջ հո- տանք, եւ որ կամուրջէն դէպ ի աջ կիրորդ փողոցը մտած էի, կարծելով թէ միեւնոյն կերպով կը շարունակէ հետեւի ինձ, ինք ուշադրութիւն չընելով՝ շարունակած իր միեւնոյն ուղղութեամբ երթաւ մինչեւ թիթեակի պողոտան. ուր յանկարծ կենալ կը պարտաւորի իմ հեռքս կործնուցած ըլլալու պատճառաւ. հետեւաբար երբ ես բաւա- կան յառաջանայէ ետք անգամ մը եւս ետքն դարձայ նայելու՝ խարուած գոտայ ինքզինքս. այդ բազմաճիւղ եւ բազմամարդ պողոտային վրայ ինչ- պէս հնարին պիտի ըլլար զայն գտնել. յուսահատ- ութիւնը պատեց զիս, եւ երբ հոս հոն վազելէ յոգնած կ'անօտայնիմ գաւազանով անհոգու- թեանս համար, վերադարձին զուգադիպութիւնն էր որ օգնեց ինձ զայն գտնելու իր սպասած տեղը:

Երկու կողմէ ալ լուռ մնալ պարտաւորուե- ցանք. եւ ալ չէի գիտեր թէ ո՞ր փառաշնորհէ զինքը կամ մինչեւ ո՞ր պիտի քայլէիք, այսպէս. նպատակս էր իրեն հաղորդել ըրած կարգադրու- թիւններն եւ իր արամադրութիւններն ալ իմա- նալ ընելիքին համար:

Այնքան մտազբաղ էինք երկուքս ալ որ կարծեմ իբրեւոյ կը սպասէիք տեղ կը կանգ առ- նելու որոշումը տալ. չէի համարձակուի նստի ամեն սրճարան մտցնելու, վախճալով որ մի գուցէ հոն ծանօթի եւ հանդիպիմք. վառն զի այդ տեղերն բոլորովին անմանօթ էին ինչպէս փաշային, նոյն- պէս՝ ինձի: Բայց երբ Թախտուսէի վարչութեան չէքին աւղեւ հասանք, սիրտ ըրի անոր գիմնցի

կարգին վրայ գտնուած փոքրիկ խալիճէ մը դուռը բանալու:

Գանկարծ եւ մէկէն երկուքս ալ ներս գտնուցանք, ցրտէն պատասպարեող նաւաւար- ներով եւ անխալաճառներով այնքան յեղուած էր այդ սրճարանը, որ օտքի վրայ իսկ կենալու տեղ չէր մնացած ներքը. իբրտ եւ աղոտիկ խոտակոտ- թիւններու, գունճիկ ճեղքեղու շարք մը ամեն կողմէ կը լսուէր եւ ալ ջօլի ծանր եւ անտաննի ճոտ մը մեզ խեղճամահ ընել կը սպառնար. սակայն միւս կողմէն դուռն ելելին ալ խելացութիւն չէր, հե- տեւաբար պարտաւորեցայ մօտենալ կապկալային տիրոջ եւ հարցնել թէ արգելք վերնայարկ մ'ալ ունի զմեզ ընդունելու:

Կարծեմ թէ էնք ալ զարմացաւ մեզի նման յաճախորդ մ'ունեցած ըլլալուն, սակայն կ'երեւայ թէ շահաւոր համարելով մեր ներկայութիւնը, առաջնորդեց զմեզ նեղ սանդուխ մը, ուրիշ մակը վերնայարկ մը կ'ենտնէր:

Աղոտութիւն բառը իր ամբողջ կիրառու- թեամբ իւր նշանակութիւնը կը կորսցնէր հոս այս գոփոխային յարկին առջեւ. եւ մահաբարուա- պօքաւքով ակամայ կը յիշեցնէր մեզ Գարիբո- այն աշխարհներու բնակարանները, զորս այնքան պերճօրէն նկարագրած է Եօթէն Սիւի իւր Գարիբո գաղտնիքներով. սակայն հոս, այս հեղ- ձուցիչ միջնորդարին տակ աւելի միւրիտարական երեւցաւ մեզ առանձին եւ անձնանշ մնալին. հետեւաբար աղոտտ արապիկ մը եղք իրարու քով նստելով՝ գաւաթ մը գարեջուր փաշային եւ գաւաթ մ'ալ "գոնեաք ինձ համար բերել յանձ- նարարելէ ետք" անմիջապէս սկսածք մեր տեսակցու- թեան:

Ըօի թէ էնք իբրեւ մեծ եղբայրս ներկայա- ցուած է մինչեւ շոգեհաւէն ընկերանալու հա- մար. թէ նաւակ նստած ատեննիս, իւր սովորաբար հագած մուշտակաւոր քաւիս եւ պիտի հագնէի եւ ինք իմ մոտիկէ վերարկուս մէջ պիտի պոլուէր եւ ցուրտ աստաթի ըլլալուն պատճառաւ գէմբեր- նիս որոշապէս չերեւելու. չափ պիտի կրնայիք ծածկուել անոնց մէջ. Բնակահաբար ներկայա- ցուած ուղեւոր մուշտակ հագնողը ըլլալով՝ մոմ լաթէ վերարկուն հագնողը պիտի ըլլար շոգեհաւէն դուռն ելնողը. որով եթէ ոեւէ անակնկալ գոփառ- անութիւն մը չպատահէր, եւ իմ վերարկուովս դուռն ելնելով՝ ինք պիտի կրնար իր որոշուած ուղեւորութիւնը շարունակել, թէ ոչ՝ հալաւաակ պարագային, բան մը յայտնի չընելով եւ օղբերկով ձեւակերպութիւններն ամբողջացնելով եւ պիտի գաւառար իր մօտ՝ հաշուստով: Անեցուցի նաեւ թէ նաւաւարս ալ այս կերպով համոզած էի եւ երկուքս ալ կրնայինք վստահ ըլլալ անոր սուղա- մտութեանը:

Մինչ այս, մինչ այն՝ որոշեալ ժամը հա- տած կը համարուէր. երկուքս մէկէն շտապեցինք, փաշան՝ բերուած գարշահոտ գարեջուրի մը գաւա- թին շարժելու հաղել հպնէլ եւ եւ կատարեալ ալ ջօլէ պարտաւորած բնիւթի գաւաթը սրբափ- րով ի մի ումզ պարպելէ ետքը՝ քառորդ մը նետե- լով կապկապեանք՝ առանց մեր ետքն նայելու

գուրս ելանք այդ դժուարին յարկէն եւ միտեղ նաւամտոյց հասա՜ք, ուր մեզ կը սպասէր ան- համբեր նաւավարը իր թաւ գորգերով ծածկուած նաւակոյճը:

Այլ պատճառ մը չունէինք իրարմէ զգուշա- նալու, վասն զի ոնէ՛ հետապնդութիւն մը ի դերեւ հանելու չափ պատրաստուած էինք եր- կուքս ալ:

Ելեկողեան ժամը 11¹/₂ էր (ը.թ.թ.) երբ նաւ- ակ նստանք, եւ իմ ուղեւոր հնգուստով մուշտաւ- կապատ Բ-լիսի մէջ պլլուած, իսկ Փայան ալ մամլոթէ վերարկուին մէջ զլուսիովը ծածկուած. գիտած էի հեռուէն, որ շողքնամբ սկսած էր խորիխը վեր առնել եւ իր մնաւ բարեկէ երկա- րաշունչ սուլումներով ուշացող ուղեւորները շո- գենաւ հրաւիրել:

Կարծեմ՝ յամար էր ժամն մեր շողքնաւ ընդունուելու. վասն զի երկար սպասելու եւ կաս- կած յարուցանելու հարկէն գէթ մտամբ ազատ էր մնալինք:

Ինչպէս յայտնի է, մեր նաւաւը կ'աճապա- րէր շողքնաւ ընդունելու. այդ միջոյնի երկուքս ալ բնաւ բռւ. մը շաղանք իրար խօսելու, վասն զի այնքան նախապաշարուած էր մտքերնիս երկխոյակի տպաւորութիւններով որ ասոր վրայ մտածել իսկ չէինք կրնար. սակայն երբ շողքնաւին մօտերը հա- սանք, հարկ եղաւ. քիչ մը կենալ հոն պաշտօնա- կան նաւակի մը մէջ սպասող պահակ սասիկանի մը անցագիրս ցուցնելու համար:

Նաւավարը հարկ եղած բացատրութիւնները բնութեաւոր տուաւ քստիկանին թէ ուղեւորին եւ թէ մինչեւ շողքնաւ ընդնախելու համար. խոս- տանալով որ իրեն հետ պիտի վերադառնար մէկը: Այս բտելով մոմլաթէ վերարկուն հագնողը ցուցաւ:

Չեմ՝ դիտեր թէ նշանացի ուրիշ բան մ'ալ բաւ. անոր, վասն զի դիտեցի որ սասիկանն այլեւս կարեւորութիւն չընծայեց մեզի նոյն իսկ ուշագրու- թեամբ դէմքերնիս որոշելու եւ մանաւանդ հար- ցում մ'անգամ չուզղցն. այլ զրոտէն սարսուցող ձեռներովը անցադրին տակէի կողմը քանի մը բառ մատարեւէ ետք նաւավարին վերադարձող եւ պո- տուկիւրեց անոր որ ուշացած ըլլալնուս աճապարէ զմեզ շողքնաւ հասցընելու:

Իսրայէլէ ալ եւ նպատասար երեւցաւ այս պա- րագան. սակայն հազիւ թէ շողքնաւին երնարանին կը մօտենայինք, ապա՜նգիւռած այլ եւս ոնէ՛ դժուարութեան մը չպատահելէ, եւ Փայան իմ օգնութեամբս երնարանին վրայ ոտքը դնելու կը փորձաստուէր, նշմարեցի որ հեռուէն երկու վից զուգաթի վայտաստին նաւակներ ծիծը մեր ուզ- դութեամբը կը սլանային դէպ իմինեւոյն երնարանը, որոնց իրաւքանչիւրին մէջ մէկմէկ անձ նստած էին եւ իրուք բնաւ պաշտօնակալի մը նշանը կամ եր- եւելոյթը չէին կրեր իրենց վրայ:

Փայային գէմըը այլապիտուած եւ կապարի գոյն առած էր բոլորովին ինչպէս նաեւ իմս ալ անդին. սակայն բարեբախտաբար դեռ անոնք որոշուելու չափ չձմտեցած. քաղութիւն ունեցայ եւս Փայան երնարանին վրայ հանելու եւ մինակ

մնալու նաւակին մէջ, որով չզիբպեցաւ աչքէն Փայային յետադարձ քայլ մ'առնել ուղեւոր գէպ ի ծով, որ վառնանն պիտի ըլլար անշուշտ մեր ամեն ակնկալութիւններուն, հազիւ անձնակ ու- նեցայ բազուկովս վեր հրելու գոյն եւ քանի մը կցկուտը բառերով հասցնել իրեն թէ «գամառ- թիւն», քով երթմա եւ խցիկիս մէջ փակուէր մինչեւ իմ իւր քով երթալու:

Մակայն նաւակներն սարաւա հասած էին մեր քով. ու մէկ մարդիկը առանց ինձ կարեւո- րութիւն տալու կը շտապէին վեր ելլել. վասն աւելի սաստկացաւ Փայային նկատմամբ. կարծեցի թէ ուղղակի գոյն ձեռքակալելու կ'երթային. հարկ եղաւ խելք մը բանեցնել ինձ անոց անցքը ար- գելելու, զժուարին եւ վտանգաւոր փորձ մ'էր, սակայն հարկադրուեցայ ի գործ դնելու եւ որպէս թէ իրենց աճապարանքէն ներդուած ու անհա- ճիտ եղած էի, անոնցմէ առաջ անցնելու փութ- կատութեամբ մը, ոտքս երնարանին զարնելով՝ տախտակամանի վրայ իյնալ ձեւացուցի եւ նաւավարին ու անոնց օգնութեամբը հազիւ կա- րողացայ ոտքի ելլել մէկ ծուռկ իրաւամբ սաստ- կապէս ցաւալուած ըլլալուս պատճառաւ:

Իրաւ ալ բաւական յաշուղած էի այս խաղիս մէջ եւ նաւավար անգամ խառնած էր, որ սկսաւ նորեկներուն դիտողութիւններ բնել իրենց շտա- պումին համար: Անոնք իմ անկուսն տեսնելով զգուշացան աւելի առաջ անցնելէ՝ հինգ վայրկեանի չափ ժամանակ շահեցընելով ինձ. մինչեւ որ թէ եւ- ռես մտած օգնեցին կաղն ի կաղ վեր ելլելուս:

Երբ շողքնաւին վրայ ելանք առաւել նայուաւ. քով տպահմուտեցայ որ Փայան իր տեղը հասած էր, եւ մինչդեռ ծուռկիս ցաւովն զբաղած էի յան- կարճ դէմս ելան դուտ. Տարաւորութիւն, որ եղգի- ասս կ'աւելուորէր եւ Պետրոս վարդապետ ներ- կարարեանն որ նոյնպէս խմբի իր հայրենիքը վերա- տեսնելէն ետքը՝ իր սրտեալ պաշտօնատեղին կ'եր- թար:

Անոնք հանդիպումն մոռցուց ինձ գրեթէ պահ մը զգացած երկիւղը երկուքն ալ խանգա- վառ ցայտումով մը վրաս նետուած էին եւ ուրա- խութեամբ ձեռքերը կը սեղմէին իրենց ուղեկից ըլլալուս, որով հաճելի ժամանց մ'առնեալ կը յուսալին շողքնաւին մէջ:

Մակայն եւ դեռ անհանգիստ էի Փայային նկատմամբ. երնարանին վրայ պատահածը մտքէս չէի կրնար հեռացնել. սակայն չէի համարձակեր վար ալ իջնելու որպէս զի տեղեկութիւն մ'առա- նում, եւ կեցած տեղը վարածուամբնով մէջ հազիւ կ'ունկնդրէի բարեկամներուս: Հետեւ եղողներն ալ ծիծը դիմացա տախտակի հետուկի մը վրայ իտարու չէլը նստած էին եւ կարծեա զես կը լռտեսէին եւ զարմացած էին նաեւ հակառակ երկուքի՝ մէկ մնա- ցած ըլլալուս:

Կարծեմ՝ ալ ձանձրացան զիս դիտելէ կամ գէթ ինձ այնքան երեւցաւ. վասն զի յանկարծ ոտք ելան եւ շողքնաւին գլխու կողմը յառաջա- ցան. արքեքս խաղ մ'էր բրածնին:

Քառորդ ժամ մը տեսեց այս անտառգու- թիւնն եւ մարդիկը ալ իմ շուրջս չէին երեւար,

երբ առաջին «գամարթին» քովս եկաւ եւ ֆրանսի-
րեն լեզուաւ հաղորդեց ինձ թէ բարեկամ մը եկած
էր եւ խցիկիս մէջ անհամբեր ինձի կը սպասէր
Տեղեկութիւն ունենալ ձեւացուցի եւ յոր-
դորեովոր զամբողջ գիւնը քանի մը վայրկեանս եւս
սպասելու, խոստացայ որ ընդ հուպ պիտի երթայի
իր քով:

Ըոգեաւաւն մեքենաները սկսած էին շարժ-
ման մէջ գրուիլ, ինչ որ մեկնումի նշանք էր հա-
մարտի սովորաբար. սակայն միւսեւոյն ատեն ապա-
րանքի մը կարասիներով լեւան պէս բարձրացած
եղիւս խոշոր «մամուշաներ», ալ կառչած էին մեր
շողեքնաւին, որոնց մէջիները շողեքնաւը կը փոխա-
գրուէին բեռամբարձ մեքենայի մը միջոցաւ:

Այս պարագան յուսարդեց զիս կէս ժամ
եւս միջոց ունենալու. եւ որովհետեւ զիս հետա-
պնդողներն այլ եւս դարձած կ'երեւային շուրջ
դառնալէ եւ վախճուով նաեւ որ մի գուռէ անոնք
Փաշային հետքը փնտռելու կամ գտնելու դաբալած
բլան, փորձեցի ահագնա՛մ «գամարտ» իջնալու եւ
եթէ արգելք մը չպատահէր Փաշան տեսնելու:

Փութացի քանի մը վայրկեանի համար ներող-
ութիւն ինդրել բարեկամներէս, եւ բաժնուելով
անոնցմէ հակառակ կողմէ վար իջնելու սանդուխե-
րէն, ուր ննջաւաններն մէջ քաշուի մը վրայ
կեկեմած գաղափաշայ:

Նշխաններէ կ'ըրան վարագործը առաջին ան-
գամ կամաց մը վեր առած ատեն, զգալի թէ
Փաշան ձախարհութեւն ցնցում մը ունեցաւ իր
նստած տեղը, որ զիս ճաննայովմը հազիւ հան-
գարացեալ եւ յանկարծ վրաս նետուելով խնդրեց
պաշտօնագիրն որ զինքը դուրս հանի շողեքնաւէ
եւ երկրորդ պարագան միայն յանդիմանելու աշ-
խատիմ:

Դիտուել եւ ստուգել եր որ մինչեւ այն ժամ
ոչ որ հետապնդած էր զինքը, նոյն իսկ նշխան-
ներէն մէջ, եւ գամարթին գատ նաեւ ոչ որ դա-
ցած էր իր քով իրեն հետ խօսելու կամ իրեն բան
հարցնելու. այս պարագան քաջակերեց զիս ապա-
հովելու զինքը որ տեղէն չշարժի. սակայն Փաշան
կը պնդէր թէ մէկ քանի անգամներն որահներուն
մէջ «Փաշ», պոռալու ահագնապէս ձայնեցր պան-
ջին հասեր էին, թէ իրարանցումն ու հրմտելու
ձայններ երկրիւ պատճառներ էին, եւ թէ պիտի
գային զինքը դուրս հանելու իր թաղանթէն:

Իրաւունք ունէր. իմ ականջն ալ հասան
այդ աղմուկները, եւ պուշ ապուշ եղած միւսեւոյն
երկիւրով՝ հազար ու մէկ արտառող մտածումներ
անցան մտքէս. Պարտաւորեցայ անգամ մը գա-
մարթիք կանչել եւ տեղեկութիւններն ուղիւ անոնց
մասին նայն իսկ Փաշային ներկայութեամբ: Յայ-
տարարեց քմիծաղով մը թէ երկու ուղեւոր
Փաշաներ գտնուելով նոյն շողեքնաւին մէջ, անոնց
տան կարասիներն էին, որք միջնայարկի բեռնա-
տունը կը փոխադրէին ծառաները, եւ այդ անու-
նով արձանագրել ու տեղաւորել կու տային,
որպէս զի որիչ բեռներու հետ չչգիթթին ու չխառ-
նուէին:

Է՛հ հէ... լայն եւ օգետու շուշք մ'առինք
երկուքս ալ. ալ այդ կողմէն վախ չէր մնացած

բնաւ. ըսել է թէ մինչեւ այն րոպէ տարագար-
ուց նեղուած ու շարժարուած էինք անհիմն եւ
անտեղի կասկածներով, եւ թերեւս այն նորերն
ներս ալ անոնց մարդիկներն էին. ինչ որ վերջէն
ալ հաստատուեցաւ. սակայն այժմ ուրիշ աւելի
ծանրագոյն պարագայ մը կը ներկայատար մեր մտաց
մէջ: Երկու վայրկեան, մին յգմիր եւ միւսը Սե-
լանիկի, ուղեկից էին Փաշային գրեթէ միւսեւոյն
շողեքնաւին որահներուն մէջ, եւ այս աւելի մեծ
գոթախտութիւն մը կը թուէր իրեն. հետեւաբար
յորդորեցի զինքը մինչեւ Բիբեւ իր խցիկէն բնաւ
դուրս չելլելու եւ իբրեւ հիւանդ իր ամէն պէտ-
քերը կ'աւօրօթէն ընդունելու:

* *

Ըոգեաւաւն աշխատութիւնը եւ մեկնելու
պարտաւորութիւնը ամբողջացած էին բոլորովն.
յուր արուեստաւ մեզի որ ուղեւոր շեղորներն դուրս
ելլելու ժամն հասած էր եւ իրօք ալ գիտեցի թէ
երկու վեցորւթթիւններն իսկ, որք պահ մը երկիւղ
պատճառած էին մեզի, կը հետանային շողեքնաւէն
սրարշաւ. ետքէն տեղեկացանք թէ ատունք երկու
նորերնոր վայրկեանու պաշտանութուղիները բերող
պալատապիս պաշտօնեաներն էին:

Այն ատեն հարկ եղաւ ինձ յայտնել իր-
դութիւնը կ'աւօրօթին, եւ ըսել իրեն թէ մինչեւ
այն ժամ կարծուած ուղեւորն ոչ թէ եւս, այլ նոյն
ինքը Փաշան էր, որ քիչ մը հիւանդ եւ գարմա-
նուելու ալ կարօտ ըլլալով՝ բժշկաց խորհրդով
Պարիս կ'ուղեւորէր. հետեւաբար ինդրեցի իմէ
մասնաւորապէս հոգ ունենալ անոր նկատմամբ եւ
կերակուր եւ այլ պէտք եղածներն անոր խցիկը
տանիլ, որոց համար մասնաւոր վճարում մը պիտի
ընէր իրեն:

Փաշան չվարանցեալ այս բաններս հա-
տատելու իր պերճախօս ֆրանսերէնովը, եւ նոյն
ժամէն իսկ արդէն եղածներուն համար գոհունա-
կութիւն յայտնեց անոր. եւ ապա ինձ դառնալով
ստիպեց զիս որ գէթ մինչեւ Տարտանել կամ Իլդի
իրեն ընկերակցած քանի որ օրինաւոր անցագիր ալ
ունէի: Սակայն նաւավարին մեկերէնիս դուրս հա-
նելու համար ըսած խոստումը միշտով՝ գոուարաւ
համոզեցի զինքը այս ուղեւորութիւնը միայնակ
կատարելու, որով կասկածներ յարուցանելէ ալ
ապաս պիտի մնայինք գէթ իմ անէնի համար, որ
վերագրաճիս կենար զանազան հարցաբնութեանց
ենթարկել զիս, նոյն իսկ նաւավարին վկայու-
թեամբ որ այդ պատճառաւ ձերբակալուած պիտի
ըլլար սննդըս:

Գամարթին արդէն իսկ սկսած էր Փաշային
պէտք եղածները խցիկը փոխադրել, ապահովեց
զիս որ միամիտ ըլլամ անոր նկատմամբ իր կատա-
րելիք ծառայութեանցը համար:

Փաշային ամէն աւանդներն, դրամ, շողե-
քնաւի ատմ եւ բանալիներն ամբողջապէս վերադար-
ձուցի իրեն. միշտ մտադրաւ եւ տխուր էր ինք. եւ
իմ անպարտաւոր հազիւ ժամանակն ունեցած ճա-
կատա համարելու եւ անկեղծ նարհակալութիւն
մը յայտնելու, երբ ես խոնարհած իւր ձեռքերը կը

Համբուրգի իրերն միակ թանկագին վարձատրու-
թիւն իմ ամեն յողովութիւններուն:

Նաւավարիս պողաւրու ձայններն եւ շոգե-
նաւին շարժման մէջ զրուիլը՝ զիս առանց միւս
բարեխմբներս իսկ տեսնուելու: շոգենաւին սան-
դուկներէն վար նետեցին շնահաստ առանց ան-
գամ մ'եւս ետեսն նայելուն: Եթէ վայրկեան
մ'եւս ուշացած ըլլայի, ապահովագլու անհնար
պիտի ըլլար ինձ գուրս ելնել անկէ:

Անհնարուն շաւաղումով միջկարացող կա-
տաղի ալիքներու եռուզեռումին մէջէն մեր նաւան
հազիւ ճողպրեցաւ շոգենաւին բնդհարելուն եւ
բնկճմբու վտանգէն, երբ ողորս առաջին անգամ
նաւակին մէջ գրած գտնուեցայ: Մէջմէտ բարկա-
ցաւ, այլ եւ խոհեմութիւնն Համբուրգի լոճէ եւ
այս ակամայ ուշացումիս համար հազար ներողու-
թիւն խոգրել անկէ:

Պահակ ոստիկանն ալ գեւ. կը սպասէր իր
նաւակովը միմիայն իմ գուրս ելնելու տեսնելու: Եւ
որոյ յանդիմանութիւնն ալ չսեցաւ: Համար նաւա-
վարի խոհեմով քառորդ մը նուր տալ պար-
տաւորեցայ:

Ոստիկանն այլ եւս սպահով իր պաշտօնի
կիրառումի մասին զարկուց իր նաւակին դուրսը
զեպ ի Սիւրբէնի նաւամատոյցը, մինչդեռ մենք
Ղալաթիոյ փողոցը ձեռք կ'առնէինք, նաւակ
նստած տեղերէնս գուրս ելնելու համար:

Ցախաւին իմ վիսնա եւ յուզումներն անցած
չէր բոլորովին: Եւ դեռ կը մտածէի որ կրնար
նաւամատոյցին վրայ մէկ ծանշնալ եւ ձերբակա-
լել զիս: Այդքան մտաբազայ էր այս մտայն որ հա-
զիւ համարձակեցայ անգամ մը գլուխս դարձնել
շոգենաւին ճամբայ ասնելու տեսնելու, որ յամբա-
բայ սկսած էր մերթ զեպ ի ետ եւ մերթ զեպ ի
առաջ կողմնակի շարժումներով իւր ուղղութիւնը
կանոնաւորել:

Փառք Առաւոճոյ, երբ նաւակէն դուրս ել-
նելով ողորս հողին վրայ դրի, հոն ալ զգացած
երկնզիս անհիմն եւ անտեղի ըլլալը զգացի, վասն
զի ոչ թէ միայն բան մը զպատահչաւս այլ նաեւ
հարցնող մ'իսկ չգտնուեցաւ թէ ո՞րեկ կը վերա-
դառնայի:

Նաւավարիս հետ արդէն հաշիւս նաւակին
մէջ կարգադրած եւ գրամը վճարած ըլլալուս,
գուրս ելած ատեն ցրտէն սարսաղացող մը պէս
վերաբարիս մէջ անձնանշելի ըլլալու շոգի պլուսած
սկսած էի Ղալաթիոյ պողոտային վրայէն անփու-
թօրէն յառաջանալ: Հետզհետէ շրջերուս հան-
դարտելով երախներուս մէջ զգայի կ'ըլլար ցուրտին
սաստիկութիւնը, որոյ մինչեւ այն ատեն կարեւորու-
թիւն չէի տեսած: Կարծես օւշաթափ պիտի իյնայի
ճամբուս վրայ եւ խնդք բքի դինեռուս մը մանկ,
ուր վրայ վրայի երեք գաւաթ դօնեպք կլեցի
եւ ատով նոր զօրութիւն մ'առի մինչեւ տունս
ճամբաս շարունակելու:

Երեկոյեան ժամը կէսն էր կամուրջին վրայ
գտնուած ատենս, եւ երկաթեայ բաղքերներուն
ըրկի ուղեցի անգամ մը եւս տեսնել շոգենաւը
եւ այնպէս հեռանալ:

Յանկարծ մէկը ուսիս զարկաւ: ցնցուեցայ
եւ Համարձակեցայ ետիս նայելու:

Ողացեալ Փափագեանն էր այն. որ իր
բտածին նայելով՝ առաւօտե է վեր ի հեռուս կը
հսկէ եղբ մը վրան եւ ինք ալ բաւական վաղեցի
է պաշտատեան նաւակներու ներկայութենէն, եւ
որ եկած էր վերջին պահուն զիս գտնել՝ այդ մա-
սին կարեւոր տեղեկութիւնները տառապեալ համար:
Միտեղ անցանք կամուրջէն, եւ ուղղակի
Սիւրբէնի երթալով՝ ծովագերեայ բարձրագի սրճա-
րանէ մը շոգենաւին աներևոյթ ըլլալու շափ հե-
ռանալը գիտելով՝ այդ միջոցին մանրամասնօրէն
պատմեցի նաեւ իրեն մինչեւ ցվերջին ժամ պա-
տահանները եւ վերջապէս կառարեալ յաջողու-
թեամբ Փաշային ճամբայ ելնելը:

Փափագեան շատ գոհ եղաւ բռնած երթա-
քին եւ իր շնորհակալութիւնը դրձեթէ տասն
գամ յայտնեց կրած յոգնութիւններուս համար:
Չորս որ ետք Փափագեան Բիրեայէ քաղաւած
հեռագիր մը ցոյց կու տար ինձ, որով Փաշան
շնորհակալութիւն կը յայտնէր իր մասին եղած-
ներուն համար, եւ կը խոտանար Պարիս հասած
ատեն ճամանոր նամակով իր ճամբագութեան
սպաւորութիւնները հաղորդել մեզի:

* * *

Փափագեանէ բաժնուած ատենս գիշերուան
ժամը 3 էր արդէն: մուգեր էի բոլորովին որ այն
գիշեր անուանա տոնամբութիւնն էր եւ ընտանիքս
մեծ մտատանջութեամբ ինձ կը սպասէր:

Ինչքան բնակարանէս ներս մտայ, չեմ գիտե-
թէ երբ տարօրինակ խանդավառութիւն մ'երեւե-
ցաւ ամենուն գէգքին վրայ, մանաւանդ Մ...
Մ...ի, որ այն գիշեր մեզ գացած էր, եւ ուշա-
նայեւ կասկածելով որ մի գուցէ երեւակայան
գծաբխտութիւնը պատահած ըլլայ, պատրաս-
տուած էր քանի մ'օրեր բացակայելուս պատրուակ
էր հնարել եւ սպահովել նաեւ զանոնք որ շու-
տով կը վերագանայի իրենց քով:

Հակառակ չափազանց յոգնած ըլլալուս,
բաւական գուրաթ երկոյթ մ'առնուցիցիք: առանկ
նոյն իսկ եղած անցածին վրայ այլ եւս բան մը
լիչելու:

* * *

Սեւալած չէիք բնաւ մեր նախորդ գուրս
կուրծնաց մէջ, որով տարիէ մը քիչ աւելի հա-
զիւ մնաց Փաշան Պարիս եւ իր անմղութիւնն ու
հաւատարմութիւնն ապացուցուելով՝ արժանե-
ցաւ վերադառնալ կայս: Կառավարութենէն Պոլիս վե-
րադառնալու, եւ այլ եւս ծերացած ըլլալուն
պատճառաւ՝ հանգստեան թողակի արժանալով՝
այս անգամ իսկիւրաւ, Սեւալէ թողը հաւ-
տատեց իր բնակութիւնը, մինեւոյն ժամանակ իր
վերաբաւութեան ճարտար արեւստան ի գործ
դնելու պարագայով:

Որք ետքը վերահաս ծանօթ անանսական
տագնապներ հրաբիրեցին զինքը արտօսի Ազգ-
վարութեան քաղ: Ժողովոյ Բ. Առնեալակի
պաշտօնն ընդունելու կայս: Կառավարութեան եւ

ապգին մինև բացուած անխտաճութեան վիճը գոցելու ծանր եւ ամենափափուկ պատասխանատուութիւնը ստանձնելով. եւ զոր վարք մինչ ցփելըն շունչ կատարեալ ուղղամտութեամբ եւ միշտ կարեւորածէն շատ աւելի օգտակար հանդիսանալով:

Այլ աւաղ. փափագեան մեռած էր. հետեւաբար մինչև վերջ ոչ զք մտածոց թէ անոր այս ամեն յաջողութիւններուն մէջ կարեւոր եւ գլխաւոր գերբ կատարողն պէտք ունեցաւ արդեօք փոխադարձաբար պաշտպանութեան, կամ այս ոգի ի բոլին կատարուած անձնագրութեանց փոխարէն գէթ չոր ու ցամաք բարոյական աջակցութիւն մը յուսալու անկէ: Այս տեսիլ գիտակցութիւնը մահասարսու ջրախնջ կը պատճառէ հանգիպ մեր մէջ ծանօթացած աշխուսական վեհանաճութեան:

Իզմիր, 1901:

ԿԻՐԱՍ



ԲՈՒՄԻ ԳՈՒՑ. ՆԱՀԱՊԵՏ ԻՌԱՍԻՆԵՆՆ

(Հարաւորութիւն)

1875 Բուխի 6ին, Սահմանագրական վերաքննիչ Յանձնաժողովին Տեղակադիրը գեղեցիկ գրութեամբ մը նախաքննութեան խիստ բովկէ՝¹ անքննելէ ետքը՝ Օգոստոսի 15ին ալ Ընդհանուր ժողովին մէջ Ռուսիեան կ'արտասանէ գրաւոր ընտր բանախօսութիւն մը՝ միշտ Ազգ. Սահմանագրութեան վերաքննութեան մասին, որուն համար արդէն ամենատարբեր վիճարանութիւն մը բացուած էր նոյն տարւան Բուխուարէն ի վեր, եւ որուն իրմէ առաջ մասնակցած էին արդէն շատեր, ինչպէս՝ Եռսուփեան Յիգրան, Կարապետ Իւթիւճեան, Սիմոն Միքայէլեան՝ իրենց երկար ճառերով:

Ժամանակին փորձառութիւններէն իրատուած, Ռուսիեան իր այս բանախօսութեամբ, Ազգ. Սահմանագրութեան մէջ կարեւոր բարեփոխութիւններ կ'ուզէր մտնանել. Ազգիկ վարչական իշխանութեան կազմութեան ձեւը փոխել կ'առաջարկէր, եւ առ այս՝ իւր ունկնդիրները կը պատրաստէր սա պերճախօս լեզուով:

² Եֆենտիեր,

Սոսոր ձեզ դառող խնդրի՝ վարչական օրինաց վերաքննութիւնը ազգային խնդրոց ոչ միայն կարեւորագոյններէն մէկն է, այլ այս ժողովին առաջին գործն է. ըսել կուզեմ թէ 15 արդի ի վեր որ այս օրենսդրական ժողովը հաստատուած է, առաջին անգամն է այս սարի որ իր առած պատգամին կ'ուզէ պատասխանել սահմանագրական օրենք մը հաստատելով. շատ մ'ընտրութիւններ, զէջ մ'որոշումներ ըրած է մինչև ցարէ, բայց անոնք հարեւանք խնդրի՝

տեւական բաներ լինին, օրենք չէին, խիստ հեռի են այն կարեւորութեան զոր կենդան յերկայ խնդրէր. որում անոնք չեն կրնար բազաւապել: Եթէ այս առաջին օրենսդրական քայլը շիտակ չգիրէ ժողովը, ապապայել համար բարի գուշակութիւն մը շիտար իր վրայ: Վարչական իշխանութիւնը ազգային յասակաշխիտութեան մահու եւ կենաց ինքից, հարեւանք լանցըլիւր արտ վրայէն: Մեր բոլոր ուշադրութիւնը կը պահանջէ, բոլոր ազգասիրութեանց կողմէ կ'են, այս խնդրի լուսարանութիւնը կրնամ՝ ժողովին բոլոր լուսներուն խիստ ու կենդանապէս ճառագայթմանը կը կարողութիւն: "Չը փակենք, ծեծենք տակաւն, քէշ մ'ալ ծեծենք տի միամտեք"՝ ըսաւ. փրաքնիչը Յանձնախմբին տեղեկաբար Հոգեշնորհ վարդապետը: Ինչն է. ըստ որում միեւնոյն սկզբամբ ճամբայ կ'ընկնէր եւ մի եւ նոյն նպատակն կը բազանք հասնէր, չէ միանալն եւ անկարելի: Այդ միացման հասնելու փոքարով՝ ներքոց ուրեմէ Եֆենտիեր, որ քէշ մ'ալ մեք ծեծենք, ըսաւ որ իր կարգին, եւ որպէսզեւ, մարդիկ չեն ծեծվոյց ալ կարելի, անկեղծ ծեծենք մինչև որ ամեն տեսակ փոշի կամ գուցէ ցեղ ապականել որ մեր տեսութիւնը կ'աղոտեն, թօթափին խառա, եւ ամենքս ի մասին յատակ ու պոյնտա տեսնենք խորշոյն ամեն կողմը, որպէս զի լցոխայինք եւ կարեւանք իրագործութեամբ պատրաստել մեր քուէները՝ յօգուտ ազգին եւ ի փառս իւր ժողովին:

Խնդրը նոր չէ մեզ համար եւ մեզ հետ ազգային խնդրոց մէջ մազ ճերմկեցողներուն: Հաստատուած ենք, բայց պէտք է խոտովանել հոս այսօր որ՝ ձեր նախնեաց փճաքանութիւններէն շատ օգուտ քաղցնէ, ձեր խօսքերն ինքի դառ եղան, լուսատու գասեր եւ կ'էն իրաւն եւ որ կարեւորք ընդհարումով լցու կը ցայտէ, այդ լցուց ցայտեց իմ աչքին եւ իմ առաջին կարեւորները՝ որ ազգայնութեամբ յայտնի են ամենուն՝ ձեր ազգափառաց ապրիցութեամբը շատ փոխադրեն կ'էն կը ներքէ բարեփոխեցան ըսեմ, եւ համոզում զայաւառ մտքին մէջ: Իր բարեփոխութիւնն է, այդ համոզումն է որ կը ցանկամ հաղորդել ժողովին եւ որով կը յուսամ հասնել կարեւոր մարման, եւ տի տեսնէր որ բոլորը ձեր խօսքերէն քաղած են, իմ կողմէն նոր գրեթէ ոչին:

Մի կարծեք Եֆենտիեր թէ փխտօփայական ճառ խօսելու փորձ տի փորձեմ. տեսականէն որչափ կարելի է հարեւանք մ'անցնողով շատով ախիւն գործնականին եւ տի տեսնէր, որ ամեն գործնական կէտ իր տեսականէն տի բղիթ պարզ ու յստակ իւր աչքերէ: Բայց կամայ ապամայ խօսք այնքան մասն տի բաժնըլի որքան կարկառուն կէտ ունի ինչպիսի: Մեր քննութեան երթակայ վարչական իշխանութիւնն է, անոր օրենք կուզելը սահմանել. հնարն որ անոր քննութիւնը չգիրացած կ'ը տեսակ իշխանութիւնը ըլլալ լու չհասնեցած անոր վրայ լու ու հէմական տնօրէնութեան ըլլալ: Հնարն է որ ճարտար արտեսապետ մը իր բանեւոյ նիւթին միտալով ըլլալ, քար կամ փայտ, իմական յասակութիւնները չգիրացնող, կակուզ է մի թէ սերտ, կակել կամ ծալել թէ բեկանալու եւայլ, օգտաւետ կերպով բանի արտ վրայ: Արի իրաւ է փխտօփայութեն ինչպէս նիւթական կարգէ նոյնպէս եւ բարդական կարգէ խնդրոց համար: Ուստի մեր առաջին քննելու կետք ազգային իշխանութեան քննութիւնն է եւ տաի խնդրոյն գաղափարն է, որ կողալով ելլենք քէշ մը միայն եւ տեսնենք թէ բնէ եւ այդ իշխանութիւնը, ումէ՞ եւ ինչն աւելն, մի՞նչ եւ ինչպէս տի յանձնենք:

Ետայ իւր ճառը կը բաժնէր երեք մասերու. առաջին մասին նիւթն էր՝ Աշխարհ իշխանա-

¹ Վոյնապրաւութիւն Ազգ. Ինչօնի՝ Բացում 1875 ամի, Նիստ Դ. էջ 54—60. նաեւ Նիստ Զ. էջ 105—108:
² ՎՊԳ, Բացում 1875 ամի, Նիստ Թ. էջ 189—181:

¹ Եւ այս տեսիլ մարգարէութիւնը դարապարտ կատարողն էր այսօր: Թ. 8. Վ. 8:
² Ի՛նչ համոզում եւ պատուաւոր յայտարարութիւն: Թ. 8. Վ. 8: